ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 26 » սեպտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-31/16 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. թիվ 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.03.2016թ. թիվ 1/73-1/10554-16 գրությամբ ներկայացված «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 03528823) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը**

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 22.01.2016թ. թիվ ԴՎԱ/141 և թիվ ԴՎԱ/142 գրությունների հիման վրա, 27.01.2016թ. թիվ 1/73-3/2403-16 և թիվ 1/73-3/2400-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն»

ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության վերը նշված գրությունները՝ կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

ՀՀ ֆինանսների նախարարության 27.01.2016թ. թիվ 1/73-3/2403-16 և թիվ 1/73-3/2400-16 գրությունների հիման վրա «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հիմքերն ուսումնասիրելու արդյունքում Կենտրոնը գտել է, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, ինչի վերաբերյալ 22.03.2016թ. թիվ 01/04.1/1113-16 գրությամբ հայտնել է Նախարարությանը:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.03.2016թ. թիվ 1/73-1/10554-16 գրությամբ հայտնել է, որ անհրաժեշտ է «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կազմակերպել բողոքարկման գործընթաց:

2. «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 29.01.2016թ. թիվ 01/04.1/188-16 գրությամբ դիմել է Ընկերությանը:

«Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ն 16.02.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերության և ՀՀ պաշտպանության նախարարության միջև գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կնքված՝ 23.03.2015թ. «ՇՀԱՊՁԲ-10/5-3» և 03.04.2015թ. «ՇՀԱՊՁԲ-10/4-3» ծածկագրերով պայմանագրերի շրջանակներում, Ընկերությունը չի մատակարարել՝

- «ՇՀԱՊՁԲ-10/5-3» ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքատեսակներից՝

1. 1-ին չափաբաժնով նախատեսված՝ դարակներով պահարաններ (բուրգ փայտյա 10 բնիկանի), 50 հատ, 2.700.000 ՀՀ դրամ արժողության,

2. 2-րդ չափաբաժնով նախատեսված՝ գրատախտակ, 30 հատ, 295.200 ՀՀ դրամ արժողության,

- «ՇՀԱՊՁԲ-10/4-3» ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքատեսակներից՝

1. 6-րդ չափաբաժնով նախատեսված՝ ննջասենյակի կահույք (կողապահարան զինվորական 2 հարկանի), 101 հատ, 1.045.800 ՀՀ դրամ արժողության,

2. 7-րդ չափաբաժնով նախատեսված՝ լողասենյակի կահույք (հանդերձարանի հավաքածու), 35 հավաքածու, 1.045.800 ՀՀ դրամ արժողության:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.01.2016թ. թիվ ԴՎԱ/141 գրությամբ դիմել է Նախարարությանը և հայտնել, որ 03.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-10/4-3» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված՝ 101 հատ «Ննջասենյակի կահույք (կողապահարան զինվորական 2 հարկանի)» և 35 հավաքածու «Լողասենյակի կահույք (հանդերձարանի հավաքածու)» ապրանքատեսակները «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի կողմից մինչև տվյալ պայմանագրի գնման ժամանակացույցով նախատեսված վերջնաժամկետը (2015թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներ) չեն մատակարարվել:

Պատվիրատուն 22.01.2016թ. թիվ ԴՎԱ/142 գրությամբ դիմել է Նախարարությանը և հայտնել, որ 23.03.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-10/5-3» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված՝ 50 հատ «Դարակներով պահարաններ (բուրգ փայտյա 10 բնիկանի)» և 30 հատ «Գրատախտակներ (գրատախտակ)» ապրանքատեսակները «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի կողմից մինչև տվյալ պայմանագրի

գնման ժամանակացույցով նախատեսված վերջնաժամկետը (2015թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներ) նույնպես չեն մատակարարվել:

Պատվիրատուն հիմք ընդունելով վերը նշվածը՝ ***2016թ. հունվարի 14-ին*** միակողմանի լուծել է 03.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-10/4-3» և 23.03.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-10/5-3» ծածկագրերով պայմանագրերը վերը նշված ապրանքատեսակների մասով:

4. ՍՑ-ԳԲԽ-31/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 24.03.2016թ. թիվ 1/73-1/10554-16 գրությամբ ներկայացված «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի միջև 23.03.2015թ. կնքվել է գրասենյակային գույքի ձեռքբերման «ՇՀԱՊՁԲ-10/5-3» ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր 1):

- Պայմանագիր 1-ի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածի՝ գնման ժամանակացույցի 1-ին չափաբաժնով նախատեսված ***150 հատ*** «Դարակներով պահարաններ (բուրգ փայտյա 10 բնիկանի)»՝ 8.100.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով և 2-րդ չափաբաժնով նախատեսված ***30 հատ*** «Գրատախտակներ (գրատախտակ)»՝ 295.200 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով գնման ենթակա ապրանքների մատակարարման համար վերջնաժամկետ է սահմանվել՝ ոչ ուշ, քան 20.12.2015թ.:
- Մինչև 20.12.2015թ. դրությամբ «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ն Պայմանագիր 1-ի N 2 հավելվածի՝ գնման ժամանակացույցի 1-ին չափաբաժնով նախատեսված ***150 հատ*** «Դարակներով պահարաններ (բուրգ փայտյա 10 բնիկանի)» ապրանքից չի մատակարարել է ***50 հատը***, իսկ 2-րդ չափաբաժնով նախատեսված ***30 հատ*** «Գրատախտակներ (գրատախտակ)» ապրանքը չի մատակարարել:

• ՀՀ պաշտպանության նախարարությունն Ընկերությանը հասցեագրված 21.01.2016թ. թիվ ԴՎԱ/130 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով Ընկերության կողմից վերը նշված ապրանքատեսակները մինչև Պայմանագիր 1-ի գնման ժամանկաացույցով նախատեսված վերջնաժամկետը (2015թ. դեկտեմբերի 20-ը) չմատակարարելու փաստը՝ Պատվիրատուն ***14.01.2016թ. միակողմանի լուծում է*** Պայմանագիր 1-ը նշված ապրանքատեսակների մասով:

Պատվիրատուն Ընկերությանը տեղեկացրել է նաև, որ ծանուցումը ստանալուց հետո վերջինս պարտավոր է 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել որպես պայմանագրով նախատեսված տույժ՝ 113508 (հարյուր տասներեք հազար հինգ հարյուր ութ) ՀՀ դրամ, ինչպես նաև տուժանք՝ 952320 (ինը հարյուր հիսուներկու հազար երեք հարյուր քսան) ՀՀ դրամ՝ որպես պայմանագրի կատարման ապահովում (կնքված պայմանագրի ընդհանուր գումարի 10%-ը)՝ 900005000758 հաշվեհամարին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության և «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի միջև 03.04.2015թ. կնքվել է գրասենյակային գույքի ձեռքբերման «ՇՀԱՊՁԲ-10/4-3» ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր 2):

• Պայմանագիր 2-ի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածի՝ գնման ժամանակացույցի 6-րդ չափաբաժնով նախատեսված ***150 հատ*** ննջասենյակի կահույք (կողապահարան զինվորական 2 հարկանի)՝ 2835000 ՀՀ դրամ արժեքով և 7-րդ չափաբաժնով նախատեսված ***50 հավաքածու*** լողասենյակի կահույք (հանդերձարանի հավաքածու)՝ 29880 ՀՀ դրամ արժեքով գնման ենթակա ապրանքների մատակարարման համար վերջնաժամկետ է սահմանվել՝ ոչ ուշ, քան 20.12.2015թ.:

• Մինչև 20.12.2015թ. դրությամբ «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի կողմից Պայմանագիր 2-ի N 2 հավելվածի՝ գնման ժամանակացույցի 6-րդ չափաբաժնով նախատեսված ***150 հատ*** ննջասենյակի կահույքից (կողապահարան զինվորական 2 հարկանի) ***չի մատակարարվել 101 հատը***, իսկ 7-րդ չափաբաժնով նախատեսված ***50 հավաքածու***

լողասենյակի կահույքից (հանդերձարանի հավաքածու) չի մատակարարվել ***35 հավաքածու:***

- ՀՀ պաշտպանության նախարարությունն Ընկերությանը հասցեագրված 21.01.2016թ. թիվ ԴՎԱ/129 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով Ընկերության կողմից վերը նշված ապրանքատեսակները մինչև Պայմանագիր 2-ի գնման ժամանակացույցով նախատեսված վերջնաժամկետը (2015թ. դեկտեմբերի 20-ը) չմատակարարելու փաստը՝ Պատվիրատուն ***14.01.2016թ. միակողմանի լուծում է*** Պայմանագիր 2-ը նշված ապրանքատեսակների մասով:

Պատվիրատուն Ընկերությանը տեղեկացրել է նաև, որ ծանուցումը ստանալուց հետո վերջինս պարտավոր է 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել որպես պայմանագրով նախատեսված տույժ՝ 149071 (հարյուր քառասունինը հազար յոթանասունմեկ) ՀՀ դրամ, ինչպես նաև տուժանք՝ 1984380 (մեկ միլիոն ինը հարյուր ութսունչորս հազար երեք հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ որպես պայմանագրի կատարման ապահովում (կնքված պայմանագրի ընդհանուր գումարի 10%-ը)՝ 900005000758 հաշվեհամարին:

3.Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.03.2016թ. թիվ 01/04.1/1113-16 գրությամբ արձանագրել է «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը և խնդրել Նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

4. Ի պատասխան Կենտրոնի 22.03.2016թ. թիվ 01/04.1/1113-16 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.03.2016թ. թիվ 1/73-1/10554-16 գրությամբ պահանջել է նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ին ներառելու ընթացակարգ:

5. <u>ՍՑ-ԳԲԽ-31/16 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.01.2016թ. թիվ 1/73-3/2403-16 և թիվ 1/73-3/2400-16 գրությունները և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, 24.03.2016թ. թիվ 1/73-1/10554-16 գրությունը, «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի 16.02.2016թ. գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.01.2016թ. թիվ ԴՎԱ/141 և ԴՎԱ/142 գրությունները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին ***նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով (տվյալ դեպքում «ՇՀԱՊՁԲ-10/5-3» և «ՇՀԱՊՁԲ-10/4-3» ծածկագրերով պայմանագրերով) նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.7.1-ի կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:

Այսպիսով, «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև կնքվել են 23.03.2015թ. «ՇՀԱՊՁԲ-10/5-3» և 03.04.2015թ. «ՇՀԱՊՁԲ-10/4-3» ծածկագրերով պայմանագրեր:

Ընկերությունը պարտավորվել է մատակարարել Պայմանագրերի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1 տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքները՝ Հավելված N 2 գնման ժամանակացույցերով սահմանված ժամկետներում և քանակությամբ:

Ընկերության կողմից «ՇՀԱՊՁԲ-10/5-3» ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 2 գնման ժամանակացույցով սահմանված ժամկետներում չեն մատակարարվել՝ 1-ին չափաբաժնով նախատեսված 150 հատ դարակներով պահարաններ (բուրգ փայտյա 10 բնիկանի) ապրանքատեսակից՝ 50 հատը և 2-րդ չափաբաժնով նախատեսված՝ 30 հատ գրատախտակներ (Գրատախտակ) ապրանքատեսակը:

Ընկերության կողմից «ՇՀԱՊՁԲ-10/4-3» ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 2 գնման ժամանակացույցով սահմանված ժամկետներում չեն մատակարարվել՝ 6-րդ չափաբաժնով նախատեսված 150 հատ ննջասենյակի կահույքից (կողապահարան զինվորական 2 հարկանի)՝ 101 հատը և 7-րդ չափաբաժնով նախատեսված 50 հավաքածու լողասենյակի կահույքից (հանդերձարանի հավաքածու)՝ 35 հավաքածու:

Պատվիրատուն՝ վերը նշված ապրանքներն Ընկերության կողմից չմատակարարելու հիմքով ***14.01.2016թ. միակողմանի լուծել է*** «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի հետ 23.03.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-10/5-3» և 03.04.2015թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-10/4-3» ծածկագրերով պայմանագրերը:

Այսպիսով, «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ն ավելի քան մեկ անգամ խախտել է «ՇՀԱՊՁԲ-10/5-3» և «ՇՀԱՊՁԲ-10/4-3» ծածկագրերով պայմանագրերով նախատեսված պարտավորությունները, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրերի միակողմանի լուծմանը:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «ա» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Այսպիսով, Կենտրոնն արձանագրում է, որ «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը,*** սակայն ***Ընկերությանը*** Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ, մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-31/16 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ Կենտրոնը չունի որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից (***14.01.2016թ.***) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ:

Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.03.2016թ. թիվ 01/04.1/1113-16 գրությամբ, արձանագրելով «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը, խնդրել է Նախարարությանը Ընկերության անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում,

ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

Մինչդեռ, ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.03.2016թ. թիվ 1/73-1/10554-16 գրությամբ պահանջել է նախաձեռնել «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով բողոքարկման գործընթաց:

Նման պայմաններում խախտումը թույլ տալու պահից (**14.01.2016թ.**) հաշված մեկ տարվա ընթացքում «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում Ընկերությունը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-31/16 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելն առկա չէ որևէ տեղեկատվություն «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 14.01.2016թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ինչը հանդիսանում է մասնակցին Ցուցակում ներառելու մասին որոշում կայացնելու համար երկրորդ պարտադիր պայմանը, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 24.03.2016թ. թիվ 1/73-1/10554-16 գրությամբ «Գևորգ-Ժասմենա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03528823) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-31/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան